«Բուրդ լուալ»։

«Սովորաբար բուրդը լուանում են տղամարդիկ, առաւելապէս դեռում։ Մեծ ոչխարինը երկու մաս անելով, իսկ փոքրինը ամբողջովին թրջում են ջրի մէջ, դնում են մի սալաքարի վրայ եւ տփոցով ծեծում, այնքան որ բուրդը սպիտականում է։ Տփոցը 70 սանտիմետր երկարութեան եւ մօտ 19 սանտիմետր լայնութեան, եւ 5 ս. հաստութեան մի փայտ է, մի ծայրը, կոթը կլորացրած, որ յարմար լինի բռնելու։ Երբ տփելուց բուրդը սպիտականում է՝ ձգում են ջրի մէջ եւ ջերտերը բաց անում, որպէսզի լաւ մաքրուի։ Ապա ձգում են թոկի վրայ եւ կամ փռում քարերի վրայ, որ չորանայ»։

«Այսպէս են լուանում ոչխարի բուրդը, իսկ այծի կեաժը նախապէս ձգում են ջրի մէջ եւ կոխկռտում, հանում ճմլում են ապա տփում։ Առնուազն վեց անգամ թրջում, մրզում եւ տփում են։ Ամառը կէս, իսկ ձմեռը երկու օրուայ ընթացքում է չորանում, թէ բուրդը եւ թէ կեաժը»։

«Քրքրել»։

«Թէ բուրդը եւ թէ կեաժը լուանալուց եւ չորացնելուց յետոյ ձեռքով քրքրում են։ Այս աշխատանքը սովորաբար կատարում են կանայք։ Նստում են ծալապատիկ, բուրդը կամ կեաժը դնում են իրենց ձախ կողմը, ձախ ձեռքով բռնում դրա ծայրից, իսկ աջով շարունակ քաշում բուրդը եւ ձգում իրենց առջեւ։ Երբ մօտաւորապէս մի կէս ֆնդաչափ քրքրած են լինում, բոլորը վերցնում են, թեթեւակի ոլորում, 1/2 — 1 մետրաչափ երկարութեան եւ ապա կծկում՝ իրար վրայ փաթաթում։ Այս փաթոյթը կոչւում է քեօլա։ Օրական մի կին կամ տղամարդ կարող է մի հոխայից մինչեւ երեք հոխա (3 ֆունտից 9 ֆ.) բուրդ քրքրել։ Հոխա ու կէսը քրքրում են մի դուրուշի (8 կ.), ուրեմն օրական մի կին այս գործով կարող է վաստակել միմիայն 8–16 կոպէկ»։

«Կդել (Գդել)»։

«Բուրդ կամ կեաժ քրքրելուց յետոյ դդում են սանդերքի վրայ բացառապէս կանայք։ Սանդերքը ընկոյզի մի տախտակ է 60 սանտիմետր երկարութեան, 30 սանտիմետր լայնութեան եւ 3 սանտիմետր հաստութեան. սրա ըստ լայնութեան ծայրերից մինը ուղիղ է, միւսը կիսաբոլոր, եւ վերջանում է մի կլոր մասով, որ յատկապէս բռնելու համար է շինուած եւ կոչւում է պոչ։ Տախտակի ըստ լայնութեան ուղիղ ծայրի մօտ երկու շարքով խփուած են քառասնական երկաթի ձողեր՝ 20 սանտիմետր բարձրութեան։ Սրանք կոչւում են մատեր։ Մատները միմեանցից կէս սանտիմետր, իսկ մատերի շարքերը 1,1/2 սանտիմետր հեռու են լինում։ Մատների ծայրերը սրած են լինում, այնպէս որ կարող են ծակել, ուստի եւ չգործածած միջոցին սրանց շարքերի մէջ անց են կացնում մի ձող, որ երկու կողմում թեւեր ունենալով յանկում է մատների ծայրերի վրայ եւ ծածկում նրանց։